ՀՈՒՇԱԹԵՐԹ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐ

(Նախատեսված է այն ընտրատեղամասի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:)

Ընտրողին գրանցելու նպատակով.

- Խնդրե՛ք ընտրողին ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը:
- Ստուգե՛ք ընտրողի դեմքի և ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի համապատասխանությունն իրար:
- Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային անձը հաստատող վկայականը (ID քարտը) ներմուծե՛ք ընտրողներին ստուգող սարքի ընթերցողի մեջ:
- Ընտրողների ստուգող սարքը ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթում առկա ընտրողի գրանցման տվյալները համեմատում է տվյալ սարքի մեջ ներմուծված ընտրողների ցուցակում առկա տվյալների հետ և տվյալների համապատասխանության դեպքում սարքի էկրանին հայտնվում են այս ընտրողի տվյալները:

Ուշադրությո՛ւն

- ✔ Եթե ընտրողը ներկայացնում է Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթ կամ անձնագիր, ընտրողի տվյալները սարքի մեջ ձեռքով որոնեք:
- ✔ Եթե ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարը միմյանց անհամապատասխան համարեք, տվյալ անհամապատասխանությունը հաստատելու վերաբերյալ դիմե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և սպասե՛ք նրա ցուցումներին: Եթե հանձնաժողովի նախագահը չի հաստատի տվյալ անհամապատասխանությունը, իրավունք ունեք քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում գրել ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հանձնաժողովի քարտուղարի հետ վավերացնում եք ստորագրությամբ: Անկախ ներկայացված անձը հաստատող փաստաթղթում եղած լուսանկարի հետ ընտրողի դեմքի անհամապատասխանությանը, ընտրողը մասնակցում է քվեարկությանը:
- ✔ Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու ներկայացած ընտրողն ընդգրկված է շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ կամ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակի մեջ, նրան կարգելվի ընտրատեղամասում մասնակցել քվեարկությանը:
- ✔ Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու ներկայացած ընտրողն արդեն մասնակցել է քվեարկությանը, նրան կարգելվի մասնակցել քվեարկությանը:

- Ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը հաստատելու դեպքում ընտրողների գրանցում իրականացնողը կատարում է ընտրողի նշմարում նրա աջ ձեռքի բթամատի եղունգին, եթե տվյալ գործողությունն անհնար է կատարել, ապա՝ աջ ձեռքի այլ մատների վրա, իսկ եթե դա ևս անհնար է՝ նույն կարգով ձախ ձեռքի վրա:

Ուշադրություն

✔ Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չի տրամադրվում քվեաթերթիկ:

✔ Ընտրողը, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), չի անցնում նշմարման ընթացակարգ:

- Նշմարման ընթացակարգը կատարելուց հետո՝ ընտրողների ստուգման սարքից տպե՛ք ընտրողի ստուգումը հավաստող կտրոնը, որը ստորագրում է ընտրողը: Տվյալ կտրոնը զետեղե՛ք գրանցման սեղանի վրա դրված անթափանց կապարակնքված տուփի մեջ:

Ուշադրություն

✔ Եթե ընտրողի ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական խոտանով, դիմե՛ք հանձնաժողովի նախագահին: Ընտրողին ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրե՛լ տվեք համապատասխան ակտը, որը պետք է տեղադրեք ընտրողի ստուգումը հաստատող կտրոնների համար հատկացված անթափանց կապարակնքված տուփի մեջ:

✔ Եթե քվեարկությանը մասնակցում է ընտրող, որը չունի վերին վերջույթներ («ֆիզիկական վիճակ»), ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի վրա ընտրողի ստորագրության տեղում արե՛ք գրառում «ֆիզիկական վիճակ» և տվյալ գրառումը վավերացրե՛ք ստորագրությամբ:

- Ստուգման ընթացակարգն ավարտելուց հետո ընտրողին փոխանցե՛ք քվեաթերթիկը, քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրար և բացատրե՛ք դրա օգտագործման և քվեաթերթիկի լրացման կարգը:

Ուշադրություն

Ընտրողին նույն քվեաթերթիկի վրա նշիչի միջոցով գունավորե՛լ տվեք հատուկ առանձնացված տեղում առկա փորձնական շրջանը:



- Ընտրողին ցուցո՛ւմ տվեք, որ մտնի գաղտնի քվեախցիկ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումով, ընտրողների գրանցում իրականացնողներից մեկը իրեն փոխանցված ընտրողների ստուգման սարքից ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին տպում է քվեարկության մասնակիցների մասին հաշվետվություն: